


Պ. Ա. Յ. Մ. Ա. Ն. Բ.

Հ. Ա. Ս. Յ. Լ.

Տարեկան 12 Ձր.
Կեցակահայ 6 Ձր.
ԱՐՏԱՍԱՀԱՍԱՆ
Երկու քիչը մեկ ծրարով
Տարեկան 14 Ձր.
Կեցակահայ 7 Ձր.

ԱՄԵՐԻԿԱ
Տարեկան 2.60 Տօր.
Կեցակահայ 1.50 Տօր.
ԿԱՆԻՈՒԿ

ՄԱՆՈՒՑՄԱՆ ՏՈՂԻ
20 ՄԵԹ.



Ի Ր Ա Վ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ր Գ Ա Ղ Ա Ք Ա Վ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԱՄՆԸ ՉՈՐԵՔԵԱՐԹԻ ԻՒ ԵՄԲԱԹ

Redaction du Journal

«Ira vounk»

(Bulgarie) VARNA

Редация

на ВѢСТНИКЪ

«Иравунк»

ВАРНА

Իրավաբան էտ լին
արտաիր

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ

Կաթողիկոսական խնդիրը, առանց երկբայություն, ամենակենսական խնդիրն է, որ դրուած է ներկայիս մէջ, հայկական օրինական սեղանին վերայ, որ կը պահէ իւր մօտաւոր լուծման Ամենակենսական խնդիրն է, որ ըստ հետեւի նա կը վերաբերի քրտութեան մի անձնատուութեան, որ իրմով կը ներկայացնէ ամբողջ հայ ազգութիւնը և նորա բարձրագոյն իշխանութիւնը:

Կան այլ և այլ իշխանութիւններ, որոնք կը ներկայացնեն ազգութեան այս կամ այն աւելի կամ նուազ կարեւորութիւն ունեցող կողմերը, սակայն չկայ իրմէ զատ այլ իշխանութիւն, որ ընդգրկէ իւր մէջ պարունակէ միահալոյն ամբողջ ազգը:

Կրօնական տեսակէտով նայելով խնդրոյն վերայ՝ կաթողիկոսը, այսինքն նա՝ որ իւր աթոռ ունի էջմիածնի մէջ, միակ ընդհանրական պետն է համայն հայ Լուսաւորչական եկեղեցւոյ Բայց համայն հայ Լուսաւորչական եկեղեցին նոյն ինքն հայ ազգութիւնն է: Մեզ հայերու համար Լուսաւորչական եկեղեցի և հայ Ազգ՝ իրապէս կը հանդիսանան միեւնոյն էութիւնը, որքան որ ալ այդ երկու գաղափարները տեսականապէս ուրոյն լինեն իրարմէ: Այդպէս եղած է անցեալին մէջ: Այդպէս է նաեւ ներկայիս մէջ: Այդ ուրիշ բան ասել չէ, բայց եթէ այն որ նա, էջմիածնի կաթողիկոսը, պետն է նաեւ ընդհանուր Հայ Ազգին:

Օ՛ր, ի հարկէ, մենք գիտենք որ Հայութիւնը ունի կառններ, որոնք անկարող լինելով իրենք չիրենք պահպանել ամբողջութեան մէջ՝ դուրս եկան այդ եկեղեցիէն, առանց անշուշտ կորցնելու իրենց ազգայնութիւնը: սակայն նոքա այնքան չնչին փորձամանութիւն կը կազմեն քրտմաններն չեն կարող խախտել դրուած ընդհանուր կանոնը, և այդ ընդհանուր կանոնը այն է

որ Լուսաւորչական եկեղեցին ունի իւր մէջ ընդհանուր ազգութիւնը, որ ինքը կը կազմէ նաեւ նոյն այդ եկեղեցին: Այս նոյն իսկ իրաւութիւնն է:

Բայց, մեր կարծիքով, երբ կանք թէ կաթողիկոսը պետն է եկեղեցւոյ և ազգութեան, գետաւած չենք լինիլ ըստ իրաւութիւնը կաթողիկոսը, կը կարծենք, աւելի է քան այդ, նա է նաեւ իրաւականութեան հայկական սեփական ինքնուրոյն քաղաքական իշխանութեան: ոչ անշուշտ, պետքաւորական իշխանութեան այլ այդ իշխանութեան որպէս աշակերտական ինքնուրոյն քաղաքական իշխանութիւն չունինք: Ազգէ վաղուց զկուած ենք, թող ներսը որ նա դրուելու ամբողջութիւնը Բայց եթէ իրապէս զրկուած ենք այդ իշխանութեանէն, կը հետեւի՝ ազգէ որ իրապէս զրկուած լինինք նաեւ այդ իշխանութեան գաղափարէն, նորա հասկացողութեանէն, նորա զգացումէն: ոչ անշուշտ Այդ գաղափարը, այդ զգացումը մենք ունինք: Եւ ո՞վ է նորա աւանգապահը եթէ ոչ նոյն ինքն ընդհանրական կաթողիկոսը, որ տեսականապէս լուրկեալն, կ'պահպանէ զայն, մինչեւ այն երջանիկ օրը, երբ ազգութիւնը յետ կառնու զայն և կը մարմնացնէ:

Այդպէս եղած է պատմութեան մէջ ամեն անգամ, երբ ձախող հանգամանքների շնորհիւ, ազգութիւնը զրկուած է իւր քաղաքական իշխանութեան ներկայացուցչէն: Այդպիսի պարագաների մէջ, ազգութիւնը հաւաքուած է ընդհանրական կաթողիկոսի շուրջը, որպէս միակ պետի շուրջը, որ կարող էր միացնել իւր մէջ ազգութեան բոլոր մասերը: Կաթողիկոսական այդ հանգամանքը, մեր կարծիքով, կը շարունակուի նաեւ այսօր: Հետեւաբար մեր աչքերուն կերեւալ նա որպէս մարմնացումը ազգային սեփական բոլոր իշխանութեանց:

Երբոր այսպէս կը գնենք հարցը, այն ժամանակ կաթողիկոսութեան բնորոշութեան խնդիրը ի

յայտ կուգայ իւր բոլոր կենսականութեամբ, իւր բոլոր կարեւորութեամբ և իւր ամենաբարձր նշանակութեամբ՝ ամբողջ ազգութեան համար: Ուստի և ազգութիւնը, որ կոչուած է իմօնոյ քրտնելու իւր կաթողիկոսը, ամեն ջանք ի գործ պիտի դնէ, որպէս զի էջմիածնի թափուր մը նոցած ամբողջ վերայ նստի մի անձ, որ ընդունալ լինի ըմբռնչու պաշտօնի բոլոր ծանրութիւնը, բոլոր հանգամանքները՝ և լինի աբխանաւոր ներկայացուցիչ ընդհանուր հայ ազգութեան: Միայն այն նկատուած որ կաթողիկոսը ներկայացուցիչ պիտի ընդհանուր հայութեան, բաւական է ինքնին բացատրելու նորա բարձր նշանակութիւնն ու կարեւորութիւնը: Սակայն ներկայ հանգամանքների մէջ, որոնք դարձած են ամենակենսական և ամենաբարձր նշանակութիւնը վեր է ամեն որեւէ մտածումէ: Այս ճիշդ է ընդհանուր հայութեան համար Այս ճիշդ է մանաւանդ կաթողիկոսը բացի իւր ընդհանրականութեանէն, որոնք նախապէս իրմով մեծ նշանակութիւն ունի նաեւ ներքին վարչական և դպրոցական տեսակէտով: Այն տեղ նորա ընտրութեան նշանակութիւնը աւելի քան կրկնակի է: Կաթողիկոսի ընդհանուր դրութիւնը, ներկայիս մէջ, անիշխանութիւնն է: Կաթողիկոսութիւնը այն տեղ վերին ծայր թույլ է: Ենթադրուելով, ընդհանրականութիւնը, չնորհիւ այդ ընդհանուր խառնակութեան, որոնց թափուր հանգիստացաւ Ռուսական աշխարհը իւր բոլոր ամբողջութեամբ, շնորհիւ նաեւ այն մըտաւոր, քառասին, որի մէջ ընկած է մանուշակ, կովկասեան հայ մտաւորականութիւնը, ազգային կեանքը այն տեղ բոլորովին ցրելուց և: Կուսակցականութիւնը, ինչպէս փաստէ ըրոյց կուտան, ոչ մի տեղ այնքան կուրտութեամբ չի գործել, որքան Կովկասի մէջ: Կը թուի թէ ամեն ինչ այն տեղ կը լինի զէպի իւր քայքայումը, զէպի իւր կործանումը: Հակաւոր է մի ուժեղ կամք, մի ուժեղ

ձեւը և մի ուժեղ մտքը, որպէս զի թույլ չտրուի որ ամեն ինչ փճանայ: Հարկաւոր է գնել էջմիածնի աթոռին վերայ մի կաթողիկոս, որ տեսնէ, որ գործէ, որ շարժի, որ հրամայէ: Հարկաւոր է ունենալ մի կաթողիկոս, որ գիտենայ հեռու պահել կողմնակի մութ ուժերը ազգային հաստատութիւններէն, որոնք արդէն ցնցուած են իրենց հիմքերուն մէջ: Հարկաւոր է որ կաթողիկոսը ինքն ալ չլինի թափուր կողմնակի, մասնաւոր, խմբակցական ազգեցութեանց և պատճառ դառնայ, օրինակ, գումարման այնպիսի կեդրոնական ժողովներ, որոնց մէջ վճռուի ազգային հոգերը թուրքերուն տալ այլ և այլ անմիտ վարդապետութեանց հետեւելով, ինչպէս ուղեցատ առնելով խմբակցական առաջին կեդրոնական ժողովին մէջ: Հարկաւոր է, մէկ խոսքով, որ կաթողիկոսը լինի շինող և ոչ քանդող: Այդ ստիպողական պահանջն է անմիջական ներկայիս Այդ անպատկառ փափաքն է բոլոր ճշմարիտ հայութեան, եթէ կը յանձնուի հայութեան ունենալ այդպիսի կաթողիկոս, կարող ենք անտարակոյս լինել որ կը ժշկուին շատ ու շատ վէրքեր, որոնք բացուած են հայութեան խորքի վերայ:

Կունենանք արդեօք այդպիսի կաթողիկոս, որ լինի իւր կոչման բարձրութեան վերայ, միանգամայն և համապատասխան հայկական արդի իրականութեան ու անոր պահանջներուն, և ո՞վ կը լինի այն՝ այդ է խնդիրը:

Հ. Խոշարուչեան

Վառձայի Ողբատարնամ քնկերութեան մօտ 30ի ժողովին մէջ, կատարուեցաւ նորոնտի Գործ. Ժողովոյ ընտրութիւնը, ամսոյ 20ին իր անագին նիստը ընելով հետեւեալ կերպով կազմէց իր կ'անը:
Ատինապետ, Սիմօն Պէնլեան, փոխ Ատինապետ Մարգիկ Գարապոյեան, Ատենապետ Տիգրան Թր. Ֆէնկճեան, Գաւազետ Սարգիս Մարտի, Համարայալ Սարգիս Մարտի, Կնչապետ, Տիգրան Քիւրքճեան, Մատակարար, Հարաչեայ Մարտի:

ՔԱՂԱՔԱՎԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Պատերազմը հաւանական չէ. ասացինք մեր նախորդ քաղաքական տեսողութեան մէջ, թուրքերը եւ Ռուսիոյ միջեւ, բայց որ այդ պատերազմը կարող է վերջի վերջոյ հարկեցուցիչ դառնալ երկու դրացի տէրութեանց համար էլ. այդ եւս միշտ կարելիութեան մէջ է:

Ինչ նշանակութիւն կարող է ունենալ մեզ համար այդպիսի մի պատերազմ երկու այնպիսի տէրութեանց միջեւ, որոնց զոյգ բաղդին հետ սերտ առնչութեամբ կապուած է Հայութեան երկու խաչորագոյն կտորներու բաղդը: Այդ հարցին ապա քննելով, որպէս պատասխան պարզ է որ անկարելի է ամեն եզրակացութիւն այդ մասին զուրկ կլինի գիտական հանգամանքից, եւ ամեն փորձ, որ կարուի այդ նկատմամբ՝ կարող է տանել մարգարէութեանց, իսկ մարգարէութիւններ չէ կարելի թոյլ տալ. երբ հարցը կը վերաբերի մանաւանդ վերին աստիճանի բարձր, վերին աստիճան կնճռոտ հանգամանքներով ներկայացող քաղաքական մի խնդրի, որի բոլոր եզրերը գրեթէ բոլորովին անծանօթ են: Խնդիրը խիստ պայմանաւորուած է: Պակտորները, որոնք կարող են խաղի մէջ մտնել, բազմակողմանի են եւ որոնց, բացի դրանից, ինչ ուղղութեամբ գործելը միանգամայն անյայտ: Այսպէս լինելով տրուած հարցը, ուրիշ բան չի մնայ անել, բայց եթէ կատարել խորհրդածութիւններ, որոնք եթէ չեն կարող ունենալ դրական, գիտական նշանակութիւն, կարող են սակայն միշտ օգտակար լինել, պայմանաւ սակայն որ նոքա, այդ խորհրդածութիւնները, թելադրուին անցեալ եւ ներկայ արդէն բուսականափձանօթ իրողութիւններին, առանց ընկնելու երեւակայութեանց մէջ. որոնք այնքան քաղցր են մի շարք մտքերու, որոնք սիրում են անձնատուր լինել նրանց ամեն տեղում. երբ մտաւորապէս պատերազմի կամ, մանաւանդ, խառնակութեանց, չիթթութեանց հաւանականութիւն կը բացուի:

ԻՆՉԵՐԻ ԸՆԴՈՒՆԱԿ ԵՆ ՄԵՐ «Ա.Զ.Ք. ՓՐԿԻՉՆԵՐԸ»

ԿԱՐՄԻՐ ԽՐԱՆԱԿԱՆՔԸ



(Շար. Ասխուր, քի հն)

Ու հա՛ն Կենտրոնի անդամները, միութեան առթիւ Լոնդոնում տրուած հացկերոյթում հազիւ էին հաջողութիւն իրար հետ, 2-3 նիստ ունեցել, երբ արդէն սկսել էին անհունօրէն իրար ատել, եւ անգլիական պոստատար գնացքները տանում էին դէպի Ամերիկա, Ռուսաստան, Եգիպտոս, Բուլղարիա, Կարակալստան, Երասխան, Գաւրա զաւարակաւ ծրարներ:

Վերակազմակերպները ամեն միջոց գործ էին դնում Կենտրոնից դուրս քշելու Սաղունուն. եւ ընկերներին՝ դառնալու համար կուսակցութեան միակ տէրերը միակ զեկավարները:

Սաղունին իր արանհանդերով սկըսում է կատաղի կռիւ եւ այդ կռոււմ անկարող է լինում միջոցների մէջ խտրութիւն դնել, Լինելով ֆանատիկ հին-հնչական, այնու ամենայնիւ միակն էր եղել որ անկողնօրէն ցանկացել էր միութիւնը եւ աշխատել նրա իրագործման: Սաղունին գրեթէ ոչ

Մարդիկ միշտ սիրում են երեւակայել Մենք, սակայն, հետի ենք բոլորովին մեզ երեւակայութեանց մասնելու, եւ մեր խորհրդածութիւնները, որոնք մեզ թելադրում են հաւանական պատերազմից, միանգամայն հետի են վարդապոյն լինելուց: Կարող է լինել որ, մենք չարաչար սխալուենք-տա՛ր Աստուած որ այդպէս լինէր, սակայն մենք կարծում ենք որ թրքո-ռուսական մի պատերազմ ամենեւին չէ խոստանում մեզ, հայերուս, բարիքներ: Բարիքները մենք չենք տեսնում, մինչդեռ չարքերը խիստ հաւանական են թուում: Ինչպէս ասացինք, երեւակայողներ շատ պէտք է լինեն: Օրինակ շատեր պէտք է գտնուին, որոնք մանաւանդ կովկասում, պէտք է մտածեն անշուշտ որ յաղթական ռուսական բանակները այս անգամ անպատճառ կտան մեջ այն, որին երկար տարիներից հետէ դիմել ենք. որի համար անհատուած, համար ու հաշիւ չունեցող զոհեր ու զոհաբերութիւններ ենք արել: Այդ շատերը կարող են իրենք իրենց օրորել այն յոսով, այն երազով որ ռուսական արիւնը, յաղթող, կազատէ Հայաստանը, ինչպէս երազւեց ու Աշտարակցի ներսէսի մամանակից եւ նրանից յետոյ: Եւ, տարւած այդ յոյսերով, կզնան նոցանից շատերը կամուր գրուիլ ռուսական բանակներին մէջ, որոնք այս անգամ ամեն ուրիշ անգամից աւելի պէտք ունին նրանց: Սակայն ինչ հիմք կայ ընդունելու որ այդ այդպէս կը լինի եւ ոչ ուրիշ տեսակ: Մենք կարծում ենք, ընդհանրապէս, որ ռուսական բանակների յաղթութիւնը համարժէք կարող է լինել Հայաստանի մէջ նոր գերաւորման անելուն: Արծուի ճիւղաների տակ, —իսկ, այդ պարագային, միաս բարեաւ, Հայաստան...:

Չէ կարելի մոռանալ, եւ չենք կարող մոռանալ, որ Ռուսաստանի համար հայկական կամ Հայաստանի ազատագրութիւն հասկացուել է միշտ հայկական աշխարհի տիրապետութիւնը: Բոլոր քրիստոնեայ պետութեան տակ Այդ մտքին, այդ կողմից զոհ գնացել են մեր անցեալի շատ կարեւոր մարդիկ. ինչի՞նչ ենթադրել որ այժմ էլ

կարող է միևնոյնը լինել: Ենթադրել որ ռուսական պետական մարդիկ այնքան անհետաքննաբեր կլինեն որ յաղթութեան պարագային թոյլ կտան իրենց՝ զրուած երկրներին մէջ դնել հայկական մի ինքնութիւն, հայկական գուցէ մի ինքնավարութիւն, որ կարող է միշտ վտանգաւոր լինել ռուսական Հայաստանի համար, այդ կը լինէր անշուշտ միամտութիւն:

Բայց թողնենք խնդրի այս կողմը, որ մեզ շատ հետաքննող կարող է տանել:

Մի ուրիշ կէտ, որ մեզ սեւ մտածումներով, տխուր մտահոգութեամբ լեցնում է, այդ այն է թէ ինչ կը լինի հայ մոլորողի վիճակը այդպիսի մի պատերազմի ժամանակ. քանի դեռ ռուսականները կանգնած են միմեանց դէմ եւ քանի պատերազմի բաղդը միայն է անորոշ: Եւ այս հարցը դնում ենք ոչ միայն բուն Տաճկահայաստանի համար, այլ նաեւ կովկասի համար: Բացառենք Յայտնի է թէ ինչպիսի՜ է մանաւանդ պատերազմի ժամանակ, թուրք խուճանի հոգեբանական վիճակը հանգէպ ռալալներէ: Յայտնի է թէ մոլեռանդութիւնը որ աստիճան ունի, չէտուում է նորա մէջ դէպի ամեն ինչ որ չէ մանաւանդ կոտորածի, ջարդի եւ մայանի երկիւղը միշտ կախուած է օտար հպատակների գլխին այդպիսի պարագաներում: Անգուցէ է խուճանը, անգուցէ է զօրքը, անգուցէ են իրենք, պաշտօնեաները, որոնք պատրաստ են համերաշխելու առաջինների հետ առաջին առթիւ հէնց: Ինչ կլինի՞ թէ մեր այս յեղափոխական պայմաններում այս կամ այն կէտի վերայ յանկարծ ծագի մի անխնայ, մի անզոյշ արարք, որոնց շատ վարժուած ենք, օրինակ հրացանի կամ մանաւանդ տրնամիթային պայթում, որ իւր ինքն երկիւղի համեմատ էլ յառաջ է բերում մեծ մոլեռանդութիւն: Մտածելն իսկ սարսափ կարող է ազդել: Այդ պարագային, կոտորածը անխուսափելի է: Եւ ինչը կարող է մեզ վերցնել այդ պատահականութիւնից —այդ է որ չենք կարող գիտենալ:

Այդ, կոտորած կարող ենք ունենալ Հայաստանում, միացած թալանի եւ, դրանց հետեւանքով էլ, անշուշտ

զաղթականութիւն: Իսկ սրանք, միանգամայն ցանկալի չեն:

Բայց կոտորածը չենք կարծում որ սահմանափակուի միայն Հայաստանի մէջ: Կովկասում այդպիսի կոտորած ու թալան նոյնպէս անպատելի չէ: Կարելի չէ մոռնալ, ապաքէն, որ այն տեղ հայ-թրքական կամ թալարական ընդհարումները գեո երէկուայ իրողութիւններ են, որ ընդհարումները մինչեւ այսօր դեռ բոլորովին էլ չեն վերջացել, որ երկու հասարակութեանց տրամադրութիւնները, միմեանց նկատմամբ միշտ թիւեւ եւ գրգռուած են, որ վրէժխնդրական կրակը դեռ մարած չէ: Ինչ կը լինի այնտեղ հայերի դրութիւնը՝ եթէ տաճկական բանակները յաղթական մուտք գործեն դէպի կովկաս: Միթէ դժուար է նախատեսել նաեւ այդտեղի համար հայկական կոտորած նոյն այդ թալարների կողմից, որոնք յարկար տոթի են սպասում...:

Այո, այնտեղ, կովկասում եւս կարող է տեղի ունենալ կոտորած:

Ահա այս սեւ հետախնդարն է որ ասկամայ բացուած է մեր առաջ ոտու: Թրքական մի պատերազմի առթիւ: Եւ մտածել որ մենք ոչինք չունենք, բացառաւորապէս ոչինչ, որ կարող լինի դիմագրաւել այդ պատահականութեանց: Անշուշտ, կասուի, ունինք յեղափոխական կազմակերպութիւններ —եւ քանի՜ հատ—որոնք կկատարեն իրենց պարտականութիւնը: Մենք կը յուսանք որ այդպէս կլինի: Բայց ինչ ունին նոքա իրապէս, որ գրաւական լինի մեր ապահովութեան —այդ է որ չգիտենք: Որպէս զի հայկական սեփական ոյժերը պահպանեն դրութիւնը, քանիք եւ պէտք է լինի ի վիճակի, նայանել, ունենան հարկ եղած ոյժը: Հակառակ պարագային, նրանք՝ իրենք կարող են լինել նոյն իսկ պատճառ կոտորածներէ: Այդ պէտք է լաւ գիտենան նրանք եւ նրա համեմատ չարժեքի:

Մեր կարծիքով, թրքո ռուսական պատերազմ ամենեւին ցանկալի չէ տրուած լինելով հայկական ամենախախտ պայմանները: Խաղաղութիւնը, թուում է մեզ, անհրաժեշտութիւն է մեզ համար: Բայց թէ ծա

մի լուրջ կրթութիւն չէր ոտացել, բայց ինքնաշխատութեամբ ձեռք էր բերել միակողմանի, որոշ մտածման եղանակ: Եւ մի կողմից ոյժ էր, զօրեղ կամքի տէր եւ սիրած լործի համար որ եւ է դժուարութեան առաջ չնկերկող:

Այսպէս, երբ Ա. գունու նախկին հաւատքը խախտեց միութեան նկատմամբ, երբ իրան գտաւ միանգամայն նորօրինակ ու տարօրինակ ընկերների ու միջավայրի մէջ՝ ենթարկեց կատարեալ հիասթափման:

Մենք չենք խոսում Սաղունու երկու ընկերների՝ 2. Արզումանեանի եւ Ս. Յալիբեանի՝ մասին, քանի որ նրանք, որպէս քաղաքական գործիչներ, բոլորովին անզոյշ ու անկամք տիպեր էին, ընդունակ՝ այս կամ այն պարագայում, թեքելու, հոտարհելու մտաւոր կամ այլ որ եւ է ոյժի առաջ:

Ուրեմն ինտրիգան, ճարպիկ Վահէն իր դէմ ունէր մի ֆանատիկ հնչակեան, մի կողմից, բայց յախուռն ոյժ՝ Սաղունին: Առաջինը իր հոգեբանութեամբ բարդ ու չար, իսկ վերջինը պարզ ու կատաղի:

Առաջինը կեսարացի՝ վերջինը Շամախցի: Մինչդեռ առաջինը թեւ ու թիկունք էին հանդիսանում Լոնդոնում Շահրիման եւ Գրիգորեան, Ամերիկա-

յում՝ Զիթեան, Մարգուկէսեան, Փափազեան եւ ուրիշներ, երկրորդին խորախուսում կամ հետեւում էին Լոնդոնում՝ Սաղունու, Դաշիբեան, Ա. մերիկայում՝ Սաղունու-Դաշիբեան, իսկ կովկասում՝ Ահրիման եւ ուրիշներ:

Իրերի այս գրութեան մէջ, Զիթեանը Ամերիկայի թողնելով՝ հասնում է Լոնդոն, ուր սկզբում հաջորդական քաղաքականութեան է հետեւում: Բայց մի քանի օրից յետոյ, Ամերիկայից իրան տրուած իրթիքէ՝ «Լիազորութեան» ոյժով՝ ինքն իրան յայտարարում է զիկատաւոր եւ պահանջում է Սաղունուց եւ ընկերներից, յանձնել Կենտրոնը իրան ու քաշելու:

Մինչեւ այդ խուլ կռիւ՝ այդ օրէանից հրապարակ է գալիս տխրահայտ բացարձակ: Շահրիման «Վերելից» իրար յաջորդող չրթարեականների, երկու հատուածների մասսաները արդէն մոլեռանդ՝ պատրաստուած են իրար բռնկելու: Մղում է միմեանց վարկաբեկելու համար ամենակեղտոտ, ամենաստոր ագիտացիան: Երբիւրում են պոչաւոր սուտեր, թեւում հրէշացէին եւ որ սոսկալին է, ծրագրում են հիւսիսային սպանութիւններ: Ա. մեհահարազատ ընկերները սկսում են իրարից կասկածել: Մի խոսքով միջա,

վայրը դառնում է սպանական, վայրագ ու ոճիրներով լցի:

Կենտրոնը չի փախչում երկու մասի է բաժանուում, որից իւրաքանչիւրը ինքնազոյս անում է այն՝ ինչ որ ցանկանում է:

Զիթեանը թողնում է Լոնդոնը եւ անցնում է Բուլղարիա, ուր հրահրում է ամենաբուռն կերպով հատուածակամ կռիւ: Մինչդեռ Զիթեանի դէմ սաստիկ լարում են հնրերը, չորերը աւելի ու աւելի են փարւում նրան: Զիթեան շատ վարպետ կերպով է առաջ մղում իր ագիտացիան: Եւ իրան ցոյց է տալիս ծայրայիղ Միութեական իսկ հնրերի դուրս է բերում հակամիութեական:

Այդ ժամանակ Բուլղարիայում էր հին հնչականների երբեմնի յայտնի գործիչ Հմայեակ Ռուչպուլեանը, որը պայքարում էր Սաղունու եւ Կենտրոնի դէմ: Եւ, նոյն պահուն, ամենաթունդ Միութեական մարդն էր. նրա համար ֆրակցիաներ գոյութիւն չունէին: Նա ասում էր. «Ոչ հին եւ ոչ նոր կայ միայն մի եւ միացեալ Հնչական կուսակցութիւն, որի անդամն եմ ես»: Նրա դիրքը իր ընկերների՝ հնրերի աջքում խախտելու էր նրանով՝ որ իր ֆրակցիայի հետ չէր գնում եւ բաժնայդ կռիւ էր մղում ընդհանրապէս:

ՍԻՐԵՆՔ ՀԱՅԱՍՏԱՆ



Հայք՝ ր, պանդուխտ յօտար աշխարհէ թափառկոտ
կենաց լուսոյ՝ ազատութեան դուք կարօտ.
Ստրկութեան ծանր լծին տակ խոնարհ,
Գլուխ ծռած ի զուր փնտռէք մխիթար.
Այս դառն կեանքին ոգին ճանչցէք, ով հայեր,
Թէ կը սիրէք զՀայաստան անվեհեր.

Ո՛չ հայրենիք ունիք, ոչ կեանք երջանիկ.
Ձեզ չեն ժպտիր օտար աստղեր ու երկինք.
Օտարութեան մէջ մի՛ փնտռէք ապաստան,
Քանզի դուք ալ ունիք երկիր մը՝ Հայաստան.
Ձեր խոր քնէն սթափեցէ՛ք, ով հայեր,
Թէ կը սիրէք զՀայաստան անվեհեր.

Ձեր երկիրը մնաց աւեր ու խոպան,
Հոն ձեր քոյրեր ու եղբայրներ լան, ողբան.
Իսկ դուք ցիր-ցան օտարներու հողին մէջ,
Անվերջ չափէք կեանքի տխուր ելեւել.
Այս ուրացումն պէ՛տք է մոռնալ, ով հայեր,
Թէ կը սիրէք զՀայաստան անվեհեր.

Ձեր գերութեան դատավճիռն է լեցուած,
Ազատութեան պայմանաւորմն է հասած.
Օն, ուխտ ըրէք, ուխտ ու երդում Միութեան,
Ձեր Միութեամբ չուտ կը կանգնի Հայաստան.
Սուրբ միութեամբ գացէ՛ք յառա՛ջ, ով հայեր,
Թէ կը սիրէք զՀայաստան անվեհեր.

Ըսէ՛ք, անկեղծ մեր սրտերը կը պարզենք,
Մեր ազգային Միութիւնը կընենք զէնք.
Կը պայքարինք ու կը մեռնինք զերդ Վարդան,
Որ մեռաւ՝ ըստ մահով փրկեց Հայաստան.
Արդ, Միութեամբ յառա՛ջ, յառա՛ջ ով հայեր,
Թէ կը սիրէք զՀայաստան կարեւոր.

Մ. Հ.



զի, հակառակ մեր կամքի, այդ պա-
տերազմը, այն ժամանակ կը մնայ մեզ
լինել վերին ծայր զգոյշ, խոհեմ եւ
չբռնայեաց. Սիակ բանը, որ պէտք
է մեզ մտածման նիւթ լինի—այդ խոյս
տալն է կոտորածներէն ու թալանից,
որոնք ուրիշ բանի չեն յանգի, բայց
եթէ նոր գաղթականութեան իսկ
այդպիսի մի գաղթականութիւն չլա-
նակում է այլեւս մահ ամեն բանի,
ինչ որ հայ է եւ հայկական.
Հ. Խ.

ՌՈՒՄԷՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ

ԵՒ

ԻՐԵՆՑ ԶԱՏԿԱԿԱՆ ԱՐՁԱՆՈՒՐԴԸ

Թու մանական զատկական արձակուր
դը, որ ըստ օրինի երկու շաբաթեայ
աւագութիւն կուենանայ, այս տարի
աւելի հաճելի եւ օգտակար եղաւ քան
իր նախնի թաղերը.

Նախ կրթական նախարարութեան
առաջարկութեամբ երկամեակներու
վճարումը ուսուցչաց համար 75 0/0
զեղջ մը ունեց ու, զիւրութիւն տրուե-
լու համար անոնց ճամբորդութեան, եւ
ուսուցիչները երկու սեռէ հաւաքուե-
ցան առաւել քան 200 հոգի Բանսթան-
ցայի մէջ, ուր քաղաքապետութեան
կողմանէ պատրաստուեցան հիւրանոց-
ներ խիստ աժան կերպով նոյնպէս եւ
ճաշ, ընթրիք եւն. եւ ուսուցիչները
իրենց հաճելի հրօսանքին հետ զիւ-
րութիւնն եւ միջոցը ունեցան զաղա-
փարակցելու. խորհրդակցելու կրթա-
կան գործին վրայ ամէն տեսակէտով.
ունենալով ութը ժողովներ, որոց մէջ
ամէն հեղինակաւոր ուսուցիչ պարզեց
իր ընտրած եւ գործադրած դասաւանդ
ման մեթոտը եւ քաղած արդիւնքը,
եղան եւ մեթոտներու բազմազան
քննադատութիւններ, որոնց բովան-
դակութիւնը խնամով արձանագրուե-
լով՝ զրկուեցաւ կրթական նախարա-
րութեան.

Ահա ազգ մը, որ կրթական լաւ ներ-
կայ մը ունի եւ՝ լաւագոյն ապագայ
մը քնակաւորաբար շատ հասանական է,
երջանի՛կ ժողովուրդ.

Ա.

Ֆրակցիայի կենտրոնական վարչու-
թեան 3 անդամներ, իսկ մասնաւո-
րապէս Սադունու ղէմ:

Խուչպուլեան հաստատով Զիթեան
նին, եւ ընդունելով նրան որպէս իր
նման թունդ Միութեանական՝ աջակ-
ցում, օգնում էր նրան եւ այնքան բա-
ցայայտ, որ հենքը կատաղում էին
Խուչպուլեանի ղէմ. . . .

Սադունին եւ ընկերները մոլեգնու-
թեան շանթեր են տեղում Զիթեանի
եւ մանաւանդ Խուչպուլեանի գլխին
ու յատուկ չրքաբերականով դաւաճան,
դաւաղիք եւ ուրիշ ածականներով մը-
կրտում թէ՛ մէկին եւ թէ՛ միւսին:

Այդ բոլոր կոխները թատերաբեմ
ունէին միմիայն արտասահմանը. եւ
դա հասկանալի էր, քանի որ Ռուս
սաստանի սահմաններում գոյ թիւն
չունէր ոչ մի վերականգնող կազմա-
կերպութիւն: Բայց այնուամենայնիւ
ողբերգութիւնը ծայր էր տալիս Ռուս
սաստանում:

Արդուն—Զիթեան բոլոր վճռում
է մուտք գործել Ռուսաստան եւ «լու-
սաւորել» հնչակեան շարքերը: Սա-
զունի եւ իւրայինները վճռում են չի
թողնել ոչ ոքին ոռոտական հողի վրայ
Պայքարը չափից զուր տաքանում է:
Վերականգնող բոլոր իր յայտնի
ուժերից մէկին՝ Միսոյին՝ Ամերիկայից

ուղարկում է Ռուսաստան, որպէս զի
հնարի շարքերից մարդիկ որան, ո-
րովհետեւ շուտով կայանալու էր ս-
ոաջիկայ Բնդհ. Պատգամաւորական
ժողովը եւ երկու կողմերն էլ աշխա-
տում էին որքան հնարաւոր է շատ
կողմնակիցներ որալ, մեծամասնու-
թիւն կազմելու համար: Ա. երկու է ա-
սել, որ միութիւնը զեռ եւս պաշտօ-
նապէս քանդած չէր:

Միսո Սաւունի եւ կիրիկիայի կը
որիններ մէջ մեծ զեր կատարած եւ
բարեւ կտրիճ գիւնտը որոյ հոչակ հա-
նած մարդ՝ հասնում է Պարիզ ու տե-
սակցում իր «նախկին» չէֆի՝ Նազար
բէկի հետ ու խորհուրդ հարցնում, թէ
ինչ անել՝ վերջ գնելու համար պա-
ռակտման: Նազարբէկը նրան հա-
ղարտեցողից խորհուրդներ է տալիս ու
ճանապարհ գցում: Միսոն գալիս է Փի-
թի, եւ զոհ գնում Ֆրակցիոնեական
մոլեգնութեան. . . .

Միսոն դառնում է Հնչակեան միութե-
ան առաջին զոհը եւ նրա անկումը
բացաժամում է հասնումական կրքերն
ու գաղաւաղին խառն միջոցը: Այն
կոծում է արտասահմանեան հայու-
թիւնը: Վահէն ու իր խմբակը զոհ
էին, որովհետեւ այդ ոճիւրը մի նոր
ազգակ էր առաջ մղելու եգիպտոսից
մինչեւ Բուլղարիա մինչեւ Ամերիկա:

ազիտացիան ընդդէմ հնարի, ընդդէմ
Սազունու եւ ընկերների:

Սազունին սլանում է կովկաս, ուս-
այդ ժամանակ տեղի է ունենում հին
Հնչակեանների պ տղամաս, որ ժողովու-
րովկասի Հնչակեանները նոյնպէս վեր-
որով եւ ալեկոծելի էին. նրանք էլ
երկու մասի էին բաժանուել — մէկը
Սազունեական՝ միւսը ընդդիմադիր,
որոնց շարքում Հրահատ, Ֆարամազ,
Համր, Արծիւ եւ ուրիշներ:

Առաջինները պահանջում էին, որ
հնարի նենտրոնը բոլոր դաւաճանների՝
այսինքն վերականգնողների եւ միութե-
ան պահպանման կուսակիցների
նկատմամբ գործ զնէ խիստ րպրեսի-
աներ, վերջնականապէս մաքրելու
կուսակցութիւնը: Իսկ վերջինները
զէմ էին բնարեւոյններին, տերթոյնե-
րին ու պահանջում էին ամեն ինչ
յանձնել Լօւզոնում կայանալիք Բնդհ.
Պատգամ. Ժողովի տնօրինութեան:

Ընդդիմադիրները շատ հարցերում
ամբաստանում էին Սազունու եւ
ընկերներին:

Գո մարվից Ա. . . ում կովմ. Պատգ.
ժողովը, որին որպէս կենտրոնի ան-
դամ եւ լիազօր՝ մասնակցեց նաեւ Սա-
զունին:

Հրապարակ եկաւ Հ Խուչպուլեա-

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ԵՒ ԿԸ ՎԱՃԱՌՈՒԻ

ՎԱՐԴՈՒ

քննական յայտնի աշխատութիւնը

ՏԱՍԸ ՏԱՐԻ

Հ. Թ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԷՋ

վերագրով, որուն հասոյթովը պիտի
խնամուին եղբայրասպանութեան զոհ
Վարդօր որդւանորդուն՝ զուակները
եւ ընտանիքը:

Գրքի գինն է 1,50 ֆր. ԿԱՆԽԻԿ
Գնելու համար պէտք է գիմել
այս հասցէով:

Մասաւ Վարդ-Պատրիկեան
Ուրիցա Ռատինա թիւ 19
(Պուլկարիա) Վառնա
Շարժումին կնիքը չը կողո օրինակ-
ները անվաւեր են:

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի

ԿԱՐԻՊ ԱՅՊԷՐ

Դրոյաւ Ա. Շիտակեան

Հայկական կեանքէ առնուած այս
խիստ հետաքրքրական վէպը քանի մը
տարի առաջ ձեռագրուելով մէջ իր
թերթօն հրատարակուած բլաւոյլ, շատ
մը հետաքրքիր ընթերցաններ խնդ-
րած էին մեզմէ զայն գրքի ալ վերա-
ծել, բայց ա՛ն ատեն մեր միջոցները
չէին ներած այդ ընկու:

Այժմ կրցինք մեր գոհացում տալ
այդ մեր հետաքրքիր ընթերցողներուն
եւ բոլոր ընթերցասէրներուն իրեն
դիրք հրատարակելով այդ վէպը:

Գինը ՄԻԱՅՆ 1 Ֆր. է

Բայց մենք ԶՐԻ պիտի գրկենք մեր
այն բաժանորդներուն, որոնք իրենց
անցեալ տարուան բաժնեգիրը ամբող-
ջովին վճարած են. Ասով մենք կը
կատարենք նաեւ մեր այն խոստումը
զոր ըրած էինք անցեալ տարի, թէ
քանի մը շաբաթ ախրաւունքին հրա-
տարակութիւնը ընդհատէնուս փոխա-
րէն մեր բաժանորդները ուրիշ կերպով
պիտի գոհացնենք:

Բայցէն գնել ուզողները կրնան 22
հատ Ե սանդղմիտոց պուլկարական նա-
մակադրով գրկել խմբագրութեան:

նին, Զիթեանին եւ ուրիշներին խիստ
կերպով պատեղու հարցը:

Երկու երկար գիշերներ անընդհատ
վճռելուց յետոյ, օպոզիցիան պար-
տէնց միայն մի ձայնով:

Անցկացաւ մահաւոր դատավճիռ:
Այդ վճիռ գործադրութեան արգելք
հանդիսացաւ սակայն օպոզիցիան ու-
սարկելով որ սոսանց կենտրոնի պաշ-
տօնական վճիռն ու կնքած հրամա-
նին՝ որ եւ է տերթօր չէր կարող կա-
տարել: Եւ նրան աջակցեց խանգա-
րել կարմիր խրատականք երի շրջքը
խնդիրը յետաձգելով մասիկ ապագային
1908 սեպտեմբերին կայանալիք Բնդհ.
Պատգամ. օրական ժողովին:

Այս որոշման օրը թէ յաջորդ օրը
հետագիրը գուժեց Զիթեանի սպա-
նութիւնը ամենավայրագ կերպով. Օ-
դեսայում. . . .

Սա երկրորդ զոհն էր Հնչակեան
հոչակաւոր միութեան:

(Շարունակելի)



Լ Ո Ւ Ր Ե Ր

Դաւաճան Ղաւթը բէքը որ 40 զօ լաւնեւոր չայ գիւղերը կը շրջէր յի զափոխական գտնելու պատարական եւ ամէն գաղաւթիւն ու բռնաբարութիւններ ի գործ կը դնէր, չարաշար սպանւած է եւ իր գիւղը քարոքանդ եղած: Փոխարէն կառավարութիւնը աւերած է երկու հայ գիւղերը:

—Տաղիկ կառավարութիւնը խստութիւններ սկսեց է թուրք պարսկական սահմանագծի շուրջը բնակող մէկ քանի քերտ ցեղապետներու վերաբերմամբ, որոնց մէկ քանին ձերբակալուած եւ դատի ենթարկւած են իբր 2. Յ. Դաւաճան թիւն նպաստողներ:

—Երգրուած միւսիւրմանները խլիստ զօգոն ոստիկանութեան կողմէ վերջի շարժման պարագլուխներու գէտ գործը դրուած անգլիական ինքնիշխան համար դիմած են մեծ վեճերին արդարութիւն պահանջելով ոստիկանութեան գոհարուն համար: Եթէ կառավարութիւնը տեղի մարդասէր միջոցներ չը հրամայէ, կարող է ապստամբութիւն ծագել:

—Տնեցի գաւաճան Դաւիթը յեղափոխականներու կողմէն ստացած վերջին ստակեր է:

«ԴՐՈՇԱԿ»

ՀԱՎԱՏԻՍԱԹ

ԹԻԻՐԵԻԱ

Ֆրանսա վէ Օսմանը իսրիւսփը

Ֆրանսա էլիսի թարափընտան Չունկուտաք վէ էրէյի մատնէն էրի հազգընտա վէրիլէն նօթայա Պապը Ալի ճէվապ վէրիլէն մեղքեր մատնէնէր մուգալէլէսի էճընալընը 13 պէնտի մուծի պինճէ թիւրքիա թարափընտան մուգալէսի լաղըմ կէլէճէլէնի պէյան իթմիլ տիր:

Պունտի իւղէրինէ Ֆրանսըլ էլիսի մեղքեր պէնտին Չունկուտաք իսկէլէսի ըրլթըմը իչիւն օլուպ էրէյի մատնէլէրինէ իլիլիկի օլմաղըլընտան պահալէ Պապ Ալիյէ եէնի պիի նօթա վէրմիլ տիր:

Ֆրանսա սէփիրի սօն նօթաղընտա թանգիմաթ թալէպ իաէյօր կէօնտ սէփիրըն խոստուսի էմրիւնի իյֆա իթմէք իչիւն Օթանպօլ իմանընտա պուլունան մույթ ֆրանսըլ զըրհընը Չունկուտաք էնիւնէ կէլմիլ տիր: Հիւքիւմէթ Չունկուտաք իաքէլէսիին մուհաֆազասը իչիւն թահքիւսաթ վէ թէտապիի հարպիլէ իճրասընա թէվէսսիւ իյլէմիլ տիր:

—Թիւրքիա վէ Եունանիտան շրմէնտըֆէր խաթլարընըն իլթիսաղընա տալիի օլան միւղէքէրէյէ պու կիւնլէրտէ պաշլաւնաճաղ տըր:

ՏԱԽԻԻՅԷ

Ֆէխաւ. Բրէնս վէ Բրէնսէս հաղաթաթը էվրոպայա օլաճաղ սէյաճէթլէրինի կէլէճէք սօն պահարաա թաալիւք էյլէմիլ օլտըլարընը վէ պու օլրատա Բէթերսպուրկի Պէրլին. Վիէննա, սէյալարընա իառէի զիյարէթ պուլունաճաղարընը Օթիւս կաղէթալարընտ օլունմուլ տըր:

Թիւրքիանըն Պուլկարիտան գօմիսէրիկիլէն Պուքրէլ պաշլէսիւնտէրի Բեաճիլ պէյ թային օլընտըլը թէլէկրաֆլար խապէր վէրմիլ իտի Միւշարալէյս կէլէն կիւն Օթիւսյա մուվաւէլէթլէ մագամ մէմուրիլէթինէ կէլտիկիլիթ Օթիւստան պիլտիլիլմիլ տիր:

—Օթիւստա շիմուրիլ գատար միւսաֆէրէթէն Պալիլիւրա բրէնսի Ֆէխաւ. կէօրկի կէլէն սապահ էվրոպա թրէնի իլէ Օթիւստան մուֆարէթէթ իթմիլ, վէ զաթ հաղէթ բրէնսի թարափընտան թէլիի պուլունմուլ տըր:

—Բրէնսէս հաղէթլէրի եէթիմէր թէրպիլէսանէսինէ կէլէն կիւն զիեարէթլէրինտէ Սիւվաթէնքա իսմիլտէ քիւչիւկ պիւր եէթիմ գըղա պիւր ալթուն խաշ իհսան էյլէմիլ տիր:

ԻՆԿԻԼՅԵՐԱ

Լօնտօն 25 ապրիլ. — Մակեդոնիա մէսէլէսի հաղգընտա Այտիլ քիւպ թարափընտան թէրպիլ վէ լիւշքիլ օլընտան միլիլիկ տիւնքի կիւն թէճէմիւ իթտի Միլիլիկ իլիսի Մ. Ժօրթ Բուսի ալէնէն պէնտի իթտի քի Մաքէթոնիտա թիւրքիանըն իէէսիլիկի մահլ իթմէք իչիւն պիւրիննի վասթա գուլվէթ իսթիմալ իթմէքտէն պաշգան չարէ եօղ տըր: Բանկօտա էօլմիլ վէ եախտ եարէլէնմիլ պիւր ճանա գարչի. մաքէթոնիտա 10 ճան էօլմիլ տիր:

Միլիլիկի սէֆէրէսի օլարաք Ս. Կիւլիլի թէքլիթաթը գապուլ օլունտու Չիա օ եօլտա չարչա ճաղընը վէ ճիտտի գուլվէթ վէրէճէլիլի թէճէմիլ իթտի:

Հաղըրունտան էնօվօն Վրէմիա կաղէթաթընը մուխպիլի պէյան իթտի քի ըուս էհալիսի տալի պու պապտէ ինկիլիլ էհալիսինէ հէթէթեար տըր: Մաքէթոնիտա վուգու պուլան ֆէնալըգլարա պիւր նիհայէթ վէրմէք իչիւն Բուսլար բէք զանի օլմուշար տըրքի ինկիլթէրա իլէ Բուսիանըն իթթիֆաթէն չաղըմալարըն քի միլլէթին տալի արղուսընը հիլ պիւր միւսանաթա ուղրա մագսըլըն իճրա օլընաճաղ:

—Լօնտրատա մէհաֆիլի սիյաւսիլէսինտէն թէրչին իտէն ըիլալէթէ կէօրէ, ինկիլիլ հիւքիւմէթի տիւլէլի մուաղղալմա պէյնիւնտէ թէրքի թէսլիհաթ էնտի:

շէսինին պիւր սուրէթ ֆիննիլյէ վէ մագուլէտէ պիւր թաղըմ գաւանինի պէյնիլմիլիլ իլէ հիւսնի նէթիճէլէ իգթիւրանի իչիւն պէօյիւք տէվլէթլէր գապինէլէրինէ պիւրէր տալէթնամէ կէօնտէրէճէք. Լահէյտէ պիւր իւչիւն ճի զօնֆէրանսըն ագուրնի թէքլիթ իտէճէք իմիլ:

ԲՈՒՍԻԱ

Լօնտրատա նէշր օլընտան «Տէյլի Բրօնիլ» կաղէթաթընըն Բէթերսպուրկտան ալըպ եաղաղը պիւր հաւատիսէ կէօրէ, Բուսիա հիւքիւմէթի իքի ալտան պէրի կարս վէ Պաթուա շըմէնտըֆէրլէրլէ թիւրքիա սինօրընա տալիմա աքէր կէօնտէրմէքտէ վէ հաթթա Վէթերսպուրկ էրքեան հարպիլէսի թիւրքիա իլէ պիւր մուհարէպէ վիւլըն թէրթիպինէ չաղըմաղտա իմիլ:

—Ֆիլիպէտէ նէշր օլընտան «Պալգան» կաղէթաթը պուլունի կաղէրինէ պէր վէճհի աթի եաղմըլ տըր:

«Պու խապէր զարիպ վէ միւսթէպալիտ տէյիլ տիր, էսքիտիւլ ման տօթ օլաւաղ նասըլ նասըլ պապա Մօսքօի պիւր կիւն եինէ թիւրքըն փունտընը եաղալմաղ իսթէյէճէլի թապիլ տիր, տօթլուք մօթլուք պուլար հէվիլիթ տըր»:

—Բուսիա հիւքիւմէթի Պաղուտա պուլունան գուլվէթի աքէրլէսինէ թօլմիլ վէ գաղաղ ալալարընտան պիւր մըգաթընըլ զամ վէ իւլլէ իտէրէք, ճէնէլալ կօրս քի գօմանտօրնտա պիւր գօլ օրտուո իրան սինօրընա կէօնտէր տիկիլի պա թէլէկրաֆի պիլտիլիլմիլ տիր:

ԱՄԵՐԻԿԱ

Ամերիկա վէ Ճաքօնիա հէօքիւմէթլէրի պահր մուսիթ Ալթաթիտէ պուլընան գուլվէթի պահրիլէրինի թէլէլիտ խոստուսընտա բէգապէթ իտէճէլիլիլէ գալլէթ քէօթէրմէքտէ տիրէք:

ԹԱՐԻՔԱՅ ԸՆԴԴԻՍԱԳԻՄ ՏԱՐԵՐԸ

Ա. ԳՐԱԿ
գրեց
ՀՄԱՅՆԱԿ ԱՐԽԱՆԵՑ

Այս անունին տակ՝ լոյս պիտի տեսնեն յաջորդական կերպով չարք մը պրօքիւրներ՝ որոնցմով հեղինակը թուրքիոյ ընդդիմադիր տարրերու պատմական, քաղաքական ու տնտեսական պայմանները ալքի առջեւ ունենալով կը մատնանչէ այն չարքները որոնք «չճշգրտած ու վաղահաս համերաշխութեան մը պարագային» կը վտանգին հայկական դատին բնաւ որոշութիւնը:

Գինն է 30 ՍՆԴ.
Դիմել Պ. Գալֆանան
Ռուսչուք

ԹԻԻՃՃԱՐԻՅԷ

ԶԱԽԻՐԷ

ՊՈՂՏԱՅ		
Վալիս	100 քիւ.	19 50-1120
Արապա	57-62 լիպ.	12/15, 30

ԱՐՐԱ		
Վալիս	100 քիւ.	13/13, 50
Արապա	45-52 լիպ.	8/8, 80

ԵՈՒԼԱՅ արապա	33-36 լիպ.	5.- 5-40
»	100 քիւ.	10/10, 50
ԶԱՎՏԱՐ արապա	52-57 լիպ.	9- 10/10

ՆԱՍՈՒԼԱ	100 քիւ.	15-16
ՏԱՐԸ արապա		7. 60 -8. 40
ԲՕԼՕՁ արապա	55-60 լիպ.	16.17

ՄԻՍԻՐ		10.40/11.40
Կիւնտէ վալիս	15/26	վէ 40-50

« ապա կէլմէքտէ, վալիս մուսթէլէս արապա 20 ֆր. արապա մուսթէլէս քէգա նարոլէս 20.

ՊԱԳԱԼԻՅԷ

Վարնա	բեաղաթընտա պաղպաղիլ մալլէրին պու կիւնքի ֆիլալթը, «Թոն ֆրանք իլէ	
ՊԱՎԷ		1.95 - 2.20
Շէթէր նէմէ		90
Շէթէր քէմէ	սանտրոլ	46.-
Բիլիլի ճէնօվա շուվալը		45.-
»	Ֆիլիպէ	
»	Ինկիլիլ »	34.50
Բիլիլ »		50.
ԿԱՁ Սանտրոլ		10.70
Չէթիլի կաղը քիւ		1.25. 1.30
ԳՈՒՐՈՒ Իւղիւ		76.
Եունմուրթա	100 աթէթի	4.50

ԾԱԽՈՒ ԳԻՐԳԵՐ

ԾԱԽՈՒՄՍ Ա. հատոր (162 էջ) 1 ֆր. « Բ. » [433 էջ] 2 ֆր. ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ Կամ ՄՐՄՈՒՅՆ 284 ՎԱՆ Երկրորդ անգամ տպագրուած եւ հոստացած. Դին 1 ֆր.

ՆԷՏԱ կը պատկերացնէ Պուլկար նիւր նիւր ու կաղը ու թուրքիէ կընտ տարապանքը անոնց ազատութեան ստալ. Դին 50 անգիլ

ՀԱՅՐԵԹԻՔ ԶԱՉԵՐ Պատկեր մը Տաճիկայապատանի իրական կեանքէն: Զիւլէալ պին 1 ֆր.

Այս գիրքը ստանալու համար գրել ՎԱՍԻՆԱ «Իրաւունք» ի խմբագրութեան:

«ԵՐԿՐԻ ԶԱՅՆԸ»

Դիւան, Բաղապական Հասարակական շարաքարք

Դ. Տարի

Բաժանորդագրութիւն

Թիֆլիս	Տարեկան 4 ռուբլի
Դաւա	» 4 ռ. 50 փ.
Կոնսթանդուպոլիս	» 3 տոլար
Արաւստան	» 15 ֆրանք

Խմբագրութեան հասցէն՝
Բէտաքսիօն «Երկրի Զայն»
Թիֆլիս

ԾԱԽՈՒ ԳԵՏԻՆ

Վառնայի կեղծորդ, «Բրօյէք» պահին դէմը 322 մէթր տարածութեամբ գետին մը՝ որ 12 մէթր երես եւ 27 մէթր խորութիւն ունի, կը ծախուի մասն գնով մը:

Մէջովայի, գիրքի եւ օդանոսութեան տեսակետով քաղաքիս մէջ եղական նկատուող այդ թաղին մէջ կալուած մը ունենալը քաղաքացորթիւն մըն է. ուստի առիթն ոգտուի ուղղը թող գրիմէ «Իրաւունք» իրաւագործի:

Տպարան «Բրաւունք» - Վառնա

Издатель: Д-ръ М. Торосианъ